ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

Ապրիլի 7-ից 8-ը Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում կազմակերպվել է «Նոր հեռանկարներ ուսանողների գիտահետազոտական ներուժի զարգացման համար» խորագրով 11-րդ հանրապետական ուսանողական գիտաժողովը:

Գիտաժողովի լիագումար նիստին ողջույնի խոսք է ասել Վանաձորի պետական համալսարանի ռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուստամ Սահակյանը: Նրա խոսքով՝ գիտաժողովի նպատակն է բացահայտել գիտական ներուժ ունեցող երիտասարդներին, խթանել նրանց գաղափարների իրագործմանը՝ կարևորելով երիտասարդության ներուժը հայրենիքի հզորացման գործում:

ԱրՊՀ «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանող Կարեն Մարտիրոսյանը գիտաժողովին հանդես է եկել «Ագրեսիայի հանցագործությունը և 2020թ. ադրբեջանական ագրեսիան» թեմայով գիտական զեկուցմաբ, Արա Սարգսյանը՝ «Ադրբեջանի պատերազմական հանցագործությունները արցախյան 3-րդ պատերազմում» թեմայով, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ Տաթևիկ Ղահրամանյանը՝ «Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» թեմայով, «Մաթեմատիկա» մասնագիտությամբ սովորող Ռուզաննա Սահակյանը՝ «Կավարներ և բուլյան հանրահաշիվ» թեմայով:

Գիտաժողովից հետո ՎՊՀ ռեկտոր Ռուստամ Սահակյանը հանդիպել է ուսանողների հետ և արժանացրել նրանց խորհրդանշական նվերների:

«Վանաձորի պետական համալսարանում մեզ ընդունեցին լոռեցուն հատուկ սրտաբացությամբ, անմիջականությամբ ու սիրով: Մեծ պատիվ էր մեր այցի համընկնումը Արցախի պուրակում Արցախի դրոշի բարձրացման արարողությանը: Արցախից ժամանածներիս հանդեպ յուրատիպ ջերմություն էին ցուցաբերում, մտահոգաբար հարցնում տիրող իրավիճակից»,-գիտաժողովի մասին իր տպավորություններն է կիսել Տաթևիկը՝ արդյունավետ գնահատելով գիտաժողովի աշխատանքները մասնագիտական փորձ ձեռք բերելու գործընթացում:

ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բնագիտական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ դեռ տարեսկզբին մայրաքաղաքի ավագ դպրոցներում անց են կացրել ինտելեկտուալ խաղ-մրցույթներ: Ապրիլի 20-ին Արցախի մայր բուհը հյուրընկալել է դպրոցների խաղերում հաղթած թիմերին: Խաղին մասնակցել է 4 թիմ: Երեք փուլից բաղկացած խաղի առաջին փուլում ստուգել են աշակերտների տրամաբանությունը, երկրորդ փուլում մասնակիցներին սպասվում էր բնագիտական ալիհասը, իսկ երրորդ փուլում հարցերի միջոցով աշակերտների հետ փորձեցին բացահայտել Արցախն իր պատմական վայրերով:

Մրցույթի մասնակից աշակերտները ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանի կողմից ստացել են գրքեր, թիմերը՝ շնորհակալագրեր բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում տեղի ունեցած խաղերին ակտիվ մասնակցելու համար: Համագործակցությունը կունենա շարունակական բնույթ:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 03 (240)
ապրիլ - 2022

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱրՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն ապրիլի 16-ին ընդունել է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի անդամներին:

Քննարկվել են տարածաշրջանին առնչվող հիմնախնդիրները՝ վերջին աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում: Նախագահ Հարությունյանը, ներկայացնելով Արցախի առջև ծառացած մարտահրավերները, խոսել է ձեռնարկվող քայլերից:

«Արցախը շարունակում է պայքարն իր ինքնորոշման իրավունքի իրացման համար՝ չընդհատելով անկախ պետականաշինության գործընթացը»,- նշել է Նախագահը՝ մանրամասնելով Արցախի ապագային առնչվող ռիսկերը, տեսլականն ու ռազմավարությունը:

«44-օրյա պատերազմից հետո Արցախի անվտանգային նոր համակարգը ձևավորվում է ՌԴ խաղաղապահ զորակազմի հետ համագործակցությամբ: Խաղաղապահները ներգրավված են շփման գծում ծագող խնդիրների լուծմանը: Ակնկալելով նրանց թվաքանակի ավելացում՝ մենք զուգահեռաբար բարելավում ենք անվտանգության սեփական մեխանիզմները»,- նշել է Ա. Հարությունյանը: Քննարկվել են նաև ստեղծված պայմաններում Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ժողովրդագրական վիճակի բարելավմանը, գիտակրթական ոլորտում և հանրային կյանքում եղած խնդիրներին առնչվող հարցեր:

Հանդիպմանը մասնակցել են նաև ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը:

Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչություն

ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

Ապրիլի 8-ից 9-ը ՀՀ Հայ-ռուսական համալսարանում ՀՌՀ հումանիտար գիտությունների ինստիտուտի հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Անձի զարգացման արդի հիմնախնդիրները ժամանակակից իրողությունների պայմաններում» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցություն է ունեցել նաև Արցախի պետական համալսարանը:

Հիմնական զեկուցողներից մեկը ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանն էր, ով հանդես է եկել «Մարտական գործողությունների մասնակից ուսանողների հետ հետվնասվածքային սթրեսային հակազդումների հաղթահարման ուղղությամբ տարվող հոգեբանական աշխատանքների որոշ առանձնահատկություններ (Արցախի օրինակով)» թեմայով զեկուցմամբ:

Ամփոփելով կոնֆերանսի աշխատանքների արդյունքները՝ պրոռեկտորը բարձր է գնահատել կոնֆերանսի արդյունավետությունը և նշել, որ ՀՌՀ հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ առաջիկայում ԱրՊՀ հետ համագործակցությունն ավելի ակտիվացնելու փոխայցելությունների, դասընթացների անցկացման և այլ ծրագրերի ուղղությամբ:

ԱՐՊՀ ԵՎ ՀՀ ԳԱԱ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանն աշխատանքային այցով ՀՀ-ում էր: Այցի ընթացքում ապրիլի 8-ին Արցախի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի միջև կնքվել է պայմանագիր, որի առարկան կողմերի միջև կրթական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական ոլորտում համակողմանի համագործակցությունն է՝ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման, դասախոսների և հետազոտողների ակադեմիական փոխանակման, համատեղ հայտարարությունների և փաստաթղթերի ստորագրման, տեղեկատվական և մշակութային միջոցառումների իրականացման միջոցով:

Հուշագիրը ստորագրել են ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը և ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը:

Պայմանագրի համաձայն կողմերը համագործակցելու են ԱրՊՀ-ում և ՀՀ ԳԱԱ ԼԻ-ում իրականացվող փոփոխությունների, իրավական փաստաթղթերի, ակտերի և միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակման, կրթական գործընթացների վերաբերյալ խորհրդատվության իրականացման, անցկացվող գիտական սեմինարներին, քննարկումներին, մրցույթներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին համապատասխան մասնագետների մասնակցության ապահովման, կողմերի կառուցվածքային ստորաբաժանումների միջև համագործակցության խթանման ուղղություններով:

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ըստ պայմանագրի դրույթների, կաջակցի ԱրՊՀ մասնագետների պատրաստման, պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ատենախոսությունների պաշտպանության կազմակերպման գործընթացներին, կրթության որակի բարելավմանը, դասախոսական կազմի որակավորման բարձրացմանը, կմասնակցի համատեղ դասախոսական և ուսանողական գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների կազմակերպմանը, իր հնարավորություններով կապահովի բուհական կրթությանն առնչվող միջազգային միջոցառումներին (գիտաժողովներին, սեմինարներին, խորհրդակցություններին) ԱրՊՀ դասախոսների մասնակցությունը, կիրականացնի ուսումնական պլանների և ծրագրերի, ինչպես նաև ուսումնական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառական փորձի փոխանակում, հնարավորություն կընձեռի ԱրՊՀ դասախոսներին, ասպիրանտներին, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողներին ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակումներում գիտական հետազոտությունների արդյունքների տպագրման համար:

ԱրՊՀ-ն իր հերթին կաջակցի համագործակցության հաջող զարգացմանը՝ մասնակցելով համատեղ հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների իրականացմանը, դրանց արդյունքների հրատարակմանը, գիտական և ուսումնամեթոդական հրատարակումների փոխանակմանը, հնարավորություն կընձեռի ՀՀ ԳԱԱ ԼԻ գիտական աշխատողներին, ասպիրանտներին, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողներին ԱրՊՀ հրատարակումներում գիտական հետազոտությունների արդյունքների տպագրման համար, Արցախի գիտաճանաչողական ուսումնասիրությունների կատարման, հայերենագիտական հետազոտությունների իրականացման ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

ԱրՊՀ ռեկտորը բարձր է գնահատել համագործակցության պայմանագրի կնքումն ու անհրաժեշտությունը՝ նշելով, որ ՀՀ ԳԱԱ ԼԻ հետ ԱրՊՀ համագործակցությունը երկար տարիների պատմություն ունի, պայմանագրի կնքումով այն կտեղափոխվի ավելի գործնական հարթություն և կնպաստի բուհի գիտակրթական կյանքի զարգացմանը՝ ունենալով արդյունավետ նշանակություն:

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ» ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ապրիլի 23-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է քննարկում՝ նվիրված հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին: Ելույթներով հանդես եկան պատմաբան դասախոսները, գիտական զեկուցումներով՝ ուսանողները՝ յուրաքանչյուրն իր թեման կապելով արդի իրավիճակի հետ և անցկացնելով համեմատականներ:

«Պարտավորված ենք ամեն տարի հիշելու հայ ժողովրդի նկատմամբ 107 տարի առաջ թուրք ոճրագործների կողմից իրականացրած հանցագործության մասին և բարձրաձայնելու ու դատապարտելու: Մենք պահանջատեր ենք մեր կորսված տարածքների: Հայոց ցեղասպանությունն իրականացվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիների ընթացքում խոշոր տերությունների թողտվությամբ, որովհետև նրանց քաղաքական շահերի բախման պայմաններում նրանք չէին կարող խոչընդոտել հայոց ցեղասպանական գործողություններին: Նույն իրավիճակում գտնվում ենք նաև այժմ, երբ խոշոր տերությունների քաղաքական շահերի բախումը խաչաձևվում է Արցախ-Հայաստանում: Ինչպես 1915 թ.-ին արևմտահայությունը, այնպես էլ արևելահայությունը, խոչընդոտ հանդիսանալով Թուրանական տերության ստեղծման ճանապարհին, ենթարկվում են ցեղասպանության: Ցեղասպանական քաղաքականությունը շարունակական բնույթ է կրում, այսօր էլ ենթարկվում ենք նման ոճրագործության, ուստի հիշելով 1915թ. ցեղասպանությունը, 1918-20թթ.-ի ջարդերն ու կոտորածները, 1988թ. Սումգայիթը, Բաքուն, Կիրովաբադը, 1992-ին՝ Մարաղան և շարունակական բնույթ ստացած նման ոճրագործությունները, պահանջում ենք դատապարտել հանցագործներին, քանզի անպատժելիությունը նոր հանցագործություններ է ծնում»,- իր խոսքում նշել է պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանը՝ անդրադառնալով նաև Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը և այն երկրներին, որոնք ընդունել և դատապարտել են ցեղասպանությունը:

Ուսանողները հանդես են եկել զեկուցումներով.

պատմության 3-րդ կուրսի ուսանողներ Գոհար Խաչատրյանը՝ «Հայոց ցեղասպանության պատճառները և իրագործման փուլերը» թեմայով, Լուսինե Ղարիբյանը՝ «Հայոց ցեղասպանության կորստաբեր հետևանքները» թեմայով, Տաթև Սարգսյանը՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը» թեմայով, Իզաբելլա Սարգսյանը՝ «Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության թուրքական տեսակետը և նրան հակընդդեմ թուրքական կարծիքները» թեմայով, իրավագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Արևիկ Բաղրյանը՝ «Հայոց ցեղասպանությունը և հայկական վրեժխնդրության գործիչները՝ վրիժառուները» թեմայով, իրավագիտություն 2-րդ կուրսի ուսանողուհի Սնեժանա Թամրազյանը՝ «Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատժելիության հենքերը» թեմայով:

Ելույթներից ու զեկուցումներից հետո ծավալվել է քննարկում արդիական խնդիրների շուրջ, մասնակիցներն արտահայտել են իրենց պահանջատիրական դիրքորոշումն ու շեշտել պատմական սխալներից դասեր քաղելու անհրաժեշտությունը:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ապրիլի 24-ին հարյուրավոր քաղաքացիներ այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թ. Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Հարգանքի տուրք են մատուցել նաև Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը, բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողությունը:

ԱՐՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 107-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՋԱՀԵՐԹԻՆ

Ապրիլի 23-ին, Ստեփանակերտում կայացել է ջահերթ՝ ի հիշատակ 1915 թ. Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի: Ջահերթին մասնակցել են ԱրՊՀ ռեկտորը, դասախոսներ և ուսանողներ:

Սուրբ Հակոբ եկեղեցում անց է կացվել հսկման և խոկման արարողություն, այնուհետև Տեր Մինաս քահանա Մովսիսյանը և եկեղեցու հավատավորները հնչեցրել են միասնական աղոթք:

Միասնական աղոթքից հետո ՀՅԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ մեկնարկել է «Զարթնի՛ր, լա՛ռ» խորագրով ջահերթ: Մասնակիցները ջահերով շարժվել են դեպի Ստեփանակերտի հուշահամալիր՝ տանելով Արցախի՝ 100մ երկարություն ունեցող դրոշը:

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պատմաբան Արմինե Խաչատրյանը կարևորել է ավանդական դարձած ջահերթի էությունն ու նշել, որ յուրաքանչյուր հայ պարտավոր է միշտ էլ հիշել հայոց ազգային ողբերգությունը:

«Մենք պարտավոր ենք հիշել ու լինել պահանջատեր: Պետք է ոչ միայն արարենք ու ստեղծագործենք այստեղ, այլև աշխատանքներ տանենք Ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Այն ոճրագործություն է, որն անպատիժ թողնելը ծնում է նոր հանցանքներ: Ցեղասպանություն իրագործող պետությունը պետք է ստանա իր արժանի պատիժը և հատուցի իր կատարած մեղքի համար, որը կլինի սաստող մյուս պետությունների համար»,-ասել է նա:

Ջահերթի մասնակից ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանի համոզմամբ՝ այն, ինչ տեղի է ունեցել հայ ժողովրդի հետ 1915 թվականին և կրկնվել է տասնամյակներ հետո, նույն ձեռագիրն ու հանցագործությունն է մարդկության հանդեպ:

«Այսօրվա երթը հուսահատ ճիչ չէ, այլ մի տարբերակ է վերհիշելու և թարմ պահելու հիշողությունները, և մարդկությանը կոչ անելու ուշքի գալ, թույլ չտալ, որ այլևս նման հանցագործություն կրկնվի»,-նշել է նա:

Երթն ամփոփվել է Ստեփանակերտի հուշահամալիրում, մասնակիցները ծաղիկներ են խոնարհել հերոսների շիրիմներին, որից հետո կատարվել է մոմավառություն:

«ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը արդիական հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ հաճախակի է կազմակերպում կլոր սեղան-քննարկումներ: Հերթական քննարկումը տեղի ունեցավ ապրիլի 14-ին: «Տարածաշրջանային զարգացումների տնտեսական հետևանքները» թեմայով կլոր սեղան-քննարկմանը հրավիրված էին տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, պետական հատվածում աշխատող տնտեսագետներ, ՀՀ-ից հրավիրված տ.գ.թ., դոցենտ Սուրեն Պարսյանը, ՀԿ ներկայացուցիչ և ուսանողներ:

Քննարկման ընթացքում մասնագետները բարձրաձայնել են աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում առկա և սպասվող մարտահրավերները, նախանշել դրանց դիմագրավելու ուղիները:

«Ռուս-ուկրաինական հակամարտությունը բավականին լուրջ ցնցումներ է առաջացրել տնտեսական աշխարհում, Հայաստանն ու Արցախը չեն կարող այս ամենից անմասն մնալ: Մեր տնտեսությունը ներկայումս գտնվում է այդ ցնցման ալիքների տակ: Ռուբլու արժեզրկման պայմաններում ռիսկային է լինելու գյուղմթերքի արտահանումը, և արտահանողների համար հնարավոր է լուրջ խնդիրներ առաջանան: Ռուբլու արժեզրկումն ու Ռուսաստանի տնտեսական անկումը կազդեն նաև մեր կենսամակարդակի, պարենային անվտանգության վրա»,-խոսելով տնտեսական ռիսկերի մասին՝ նշել է տնտեսագետ Ս.Պարսյանը և հավելել, որ ստեղծված իրավիճակում պետք է կարողանալ ոչ միայն դիմագրավել առկա մարտահրավերներին, այլև՝ իրավիճակից օգուտ քաղել:

Տնտեսագետի խոսքով՝ այդ ռիսկերն իրենց հետ նաև Հայաստանի ու Արցախի տնտեսությունը զարգացնելու հնարավորություններ են բերում և որպես օրինակ մատնանշում է ՌԴ-ից ՀՀ զբոսաշրջիկների մեծ հոսքը, դրա հետ կապված ՀՀ-ում անշարժ գույքի շուկայում դրական մեծ շարժը, ՏՏ ոլորտում ՀՀ-ում գրանցված նոր ընկերությունները, ձեռնարկությունների ստեղծումն ու դրանց գործունեությունը, որոնք լայն հնարավորություն են ընձեռում ՀՀ տնտեսության զարգացման համար:

Որպես ճգնաժամերի կառավարման ու հաղթահարման ուղի՝ տնտեսագետ Պարսյանը կարևորում է նաև գյուղատնտեսական արտադրության ծավալների ընդլայնման անհրաժեշտությունը՝ պարենային ինքնաբավություն ապահովելու տեսանկյունից:

Խոսելով Արցախի տնտեսության մասին՝ տնտեսագետը զարգացման նախապայման է համարում անվտանգությունը, որով պայմանավորված է՝ գործարարության խթանումը: Նրա կարծիքով՝ ԱՀ Կառավարությունը պետք է սոցիալական օգնություններին հատկացվող ֆինանսական միջոցները ուղղի նոր աշխատատեղերի ստեղծմանը. «Աշխարհում ոչ մի երկիր սոցիալական օգնությունների միջոցով տնտեսություն չի զարգացրել, ներառական տնտեսական աճ չի ապահովել, ավելին՝ փորձը ցույց է տվել, որ կարող է հասարակությանը դեգրադացնել»: Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը նշել է, որ թեման արդիական է, քանի որ տնտեսական ճգնաժամը՝ պայմանավորված նախ համավարակով, ապա նաև՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմով, լուրջ հարվածներ է հասցրել Արցախի տնտեսությանը:

«ՀՀ և ԱՀ տնտեսությունը կանգնեց լուրջ մարտահրավերների դիմաց: Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմը հսկայական վնասներ պատճառեց տնտեսությանը: Թշնամու վերահսկողության տակ անցավ 110 համայնք, որի հետևանքով ունենք ավելի քան 31 220 բռնատեղահանված անձ»,-նշել է Ռ.Մանգասարյանը՝ հավելելով, որ անհրաժեշտություն է առաջանում ներդնելու պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների վերացման համազգային ապահովագրության համակարգ՝ հետպատերազմական սոցիալ-տնտեսական վնասների փոխհատուցման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ակնկալիքով:

Քննարկման մասնակիցները կարևորել են մարդկային կապիտալի արդյունավետ կառավարումը, ճիշտ կադրային քաղաքականությունը, ՌԴ-ի հետ կապերի ամրապնդումը տնտեսական դաշտում՝ ընդգծելով, որ ՀՀ-ն և ԱՀ-ն, հաջողությամբ կարող են դառնալ միջանկյալ երկիր ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցների պայմաններում ապրանքաշրջանառությունը կազմակերպելու համար:

ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապրիլի 27-ին ԱրՊՀ-ում տեղի է ունեցել «Արդի պայմաններում կրթության ոլորտում հոգեբանական աշխատանքի առաջնահերթ ուղղությունները» թեմայով գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցում էին նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱՀ նախագահի խորհրդականներ, ԿԳՄՍ նախարարության, դպրոցների ներկայացուցիչներ, հոգեբան մասնագետներ տարբեր կառույցներից, համալսարանականներ:

Ողջունելով ներկաներին՝ ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը կարևորել է կոնֆերանսի նշանակությունը՝ ընդգծելով պատերազմից և կորուստներից հետո ազգային ոգին ամրապնդելու, համախմբվելու և ազգային գաղափարախոսությունը վերակերտելու անհրաժեշտությունը, ինչին, նրա խոսքով, նպաստում են նաև նման գիտագործնական կոնֆերանսները:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն իր ողջույնի խոսքում անդրադարձել է 44-օրյա պատերազմից հետո կրթական բնագավառում հետպատերազմական խնդիրների հաղթահարման, բուհում կրթական կյանքի վերակազմակերպման, բնականոն ընթացքի ապահովման դժվարություններին, ինչին, նրա խոսքով, նպաստել են նաև հոգեբանների աշխատանքները, այդ թվում նաև՝ ռուս խաղաղապահների հոգեբանների ներգրավմամբ:

Ռեկտորը բարձր է գնահատել ԱրՊՀ «Հոգեբանական» կրթական ծրագրի իրացումը՝ այն համարելով բուհի առաջատար մասնագիտություններից մեկը, որը հատկապես վերջին տարիներին արձանագրում է դիմորդների մեծ թիվ:

ԱՀ նախագահի խորհրդական Արմեն Սարգսյանը կարևորել է կոնֆերանսի գիտական և գործնական բաղադրիչների առկայությունը:

«Արցախում ապրող արցախցիները շարունակում են ապրել լիարժեք կյանքով՝ զարգացնելով գիտությունը, մշակույթը, կրթությունը և մյուս ոլորտները: Արցախում ապրող 37-ամյա երիտասարդը, ով արդեն մասնակցել է երեք պատերազմի, շարունակում է ծառայությունն իր հայրենիքին՝ ապրելով լիարժեք կյանքով: Այս երևույթը որպես փորձ միջազգային մակարդակում ներկայացնելու դեպքում կարող է իր աննախադեպությամբ շոկային թվալ նույնիսկ, բայց ոչ արցախցու պարագայում»,- նշել է նա իր ոջույնի խոսքում:

ԱՀ նախագահի խորհրդական, հոգեբան Լուսինե Ղարախանյանն անդրադարձել է ներառական կրթությանը՝ նշելով. «Ներառական կրթությունը խարսխված է հստակ, իրավահավասար իրավունքների վրա, ոչ թե՝ խղճահարության կամ մարդասիրության: Յուրաքանչյուրս պետք է ամեն ինչ անենք, որ կրթական համակարգում հոգեբանական ծառայությունները լիարժեք իրականացվեն: Յուրաքանչյուրը պետք է ունենա ապրումակցման, սոցիալական համերաշխության իր քարտեզը:Պատերազմից հետո մենք պահում ենք մեր դիմադրողականությունը, հավատում եմ, որ բարձրացնելու ենք մեր ապրումակցման, սոցիալական համերաշխության ցուցիչները, և դա լինելու է նաև կրթական համակարգի ու սեփական պատասխանատվության զգացման շնորհիվ, որպեսզի փրկենք մեր գալիքը»,-նշել է Լ. Ղարախանյանը:

➥ 5

4 ➥ Կոնֆերանսին զեկուցումներով հանդես է եկել հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը «Դպրոցական հոգեբանության պարադոքսները» թեմայով: Ոլորտի խնդիրներից մասնագետը առանձնացրել է գնահատման համակարգը, սովորողների ցածր մոտիվացիան, ծնողների հետ տարվող աշխատանքների թույլ կապը և առաջադրել լուծման իր տարբերակները. ծնողների հետ դպրոցների հոգեբանների աշխատանքների ակտիվացում, դպրոցների հոգեբանների ազդեցության մեխանիզմների ընդլայնում, գնահատման համակարգում արտաքին գնահատումը դարձնել «ներքին» և սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար՝ ուսուցման հետաքրքրվածություն, մատչելիություն և գործնականություն սկզբունքների համադրելիություն:

«Արդի պայմաններում կրթությանը հարաբերվող խնդիրները քննելիս պետք է հաշվի առնել մի շարք վճռորոշ՝ արտակրթական և կրթական գործոններ: 21-րդ դարում բոլոր խնդիրների հիմքում ընկած է հասարակական պահանջմունքի զարգացման կամ հարափոփոխ միջավայրի հարցը, որի լուծման համար կրթագիտությունն առաջարկում է շարունակական (հարատև) կրթության մոդելը»,-նշել է ԱրՊՀ ՈԱԿ պետ Շուշանիկ Սաղյանն իր «Կրթության շարունակականություն և շարունակական կրթություն» թեմայով զեկուցման մեջ:

Զեկուցումներով հանդես են եկել նաև դպրոցների ներկայացուցիչներ՝ տնօրեն, ուսուցիչ, հոգեբան-մասնագետներ, դասախոսներ, ոլորտին առնչվող մասնագետներ, ուսանողներ, ովքեր բարձրաձայնել են բնագավառի խնդիրներ, մատնանշել դրանց լուծման ուղիներ: Կոնֆերանսն ամփոփվել է մտքերի փոխանակությամբ ու քննարկումով:

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԲԵՐԴԱՇԵՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՓԱՌԱՏՈՆԻՆ

Սուրբ Զատկի տոնին «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի, Բերդաշենի համայնքապետարանի և բերդաշենցիների աջակցությամբ ԱՀ Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի սաների ջանքերով համայնքում կազմակերպվել է հայկական ավանդական ուտեստների փառատոն:

Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել ժենգյալով հացի պատրաստման ընթացքի ցուցադրում, հյուրասիրություն, տեղական, այդ թվում՝ Berdashen Wine գինիների հյուրասիրություն, ազգային պարերի ներկայացում, արցախյան բարբառի և մշակույթի վերաբերյալ խաղ, ձեռագործ հուշանվերների ցուցադրություն, ինքնաեռով թեյի հյուրասիրություն, զատկական փլավ ու կարմիր ներկած ձու, և, իհարկե, շրջայցեր գյուղի պատմամշակութային վայրեր:

ԱրՊՀ մի խումբ ուսանողներ մասնակցել են փառատոնին՝ կարեւորելով նման միջոցառումների միջոցով ազգային, հոգևոր-մշակութային արժեքների պահպանումը, տարածումն ու ամրապնդումը երիտասարդության շրջանում: